Վահան Թեքեյան

Անունդ

Ինչո՞ւ անունը դ այստեղ չըկարենա՛մ գրել ես
Եվ աշխարհի չհայտնեմ, թե քեզ ինչպես սիրեցի . . .
Երկու վանկերը անոր կզրուցեմ գաղտնապես,
Եվ այն ամբողջ կթըվի սիրո մատյան մը ինձի . . .
Ինչո՞ւ անունը դ այստեղ չըկարենամ գրել ես . . . :

Հիմա, հեռու իրարմե՝ միայն անունը դ ունիմ
Բերնիս վրա, համբույրի մը պես աննյութ և անուշ . . .
Գիշեր ատեն, սենեկիս մենության մեջ մտերիմ,
Ես զայն կըսեմ և ահա քեզ կտեսնեմ քաղցրահուշ . . .
Հիմա, հեռու իրարմե՝ միայն անունը դ ունիմ . . . :

Գեղեցկությունդ ու իմ սերս հորինեցին զայն կարծես . . .
Սիրտս իր անդուլ տրոփմամբ անընդհատ զայն կհեգե՝
Թէպետ վաղուց մտքիս մեջ քեզ ամբողջ գոց գիտեմ ես . . .
Քեզ չըճանչցած ունեի՞ր դուն այդ անունը միթե . . .
Գեղեցկությունդ ու իմ սերս հորինեցին զայն կարծես . . . :

Ո՛չ, չեմ ուզեր, չեմ կրնա՛ր ես զայն հանձնել աշխարհի.
Երկու վանկովն իր կուզեմ խնկել իմ կյանքս միայն,
Եվ երբ վերջին արևիս վերջին ճաճանչը մարի՝
Անունդ ի շուրթ դեռ կուզեմ ողջունել այգը մահվան.
Ո՛չ, չեմ ուզեր, չեմ կրնա՛ր ես զայն հանձնել աշխարհի . . . :